

իմ մի ուրիշ ծանօթ և ասում է. «շատ լաւ
են արել որ այդ տեսակ թեթև և ծիծաղա-
շարժ պիհսաներ են ընտրել, եթէ ոչ ծանր
պիհսա այս շոքում ամենքին կը ձանձրաց-
նէր...»

Տեսնում էք, ընթերցող, որքան դժուար է ուրիշն, թատրօնական բէցէնզենտի գործը, որ պէտք է լսի հասարակութեան մէջ ամենահակասող մտքեր.... Այդ պատճեառով ես ոչ ոքին չեմ կամենում լսել և կը յայտնեմ միայն իմ անձնական տպաւորութիւնները:

Ես երեք այդ տեսակ թեթև, ծիծաղաւ
շարժ, գուրեկան և սիրուն հայոց ներկայաւ
ցումն չեմ տեսել: Սովոր լինելով աւելի դրս-
ժուարամարս ներկայացումներին, ես կարծում
էի որ ոչ թէ հայոց թատրոնում եմ գաղնա-
վում, այլ որ և է եւրօպական ներկայացման
մէջ:

Նա խօսում էմ ընդհանուր տպաւորութեան
մասին, իսկ մանրամասնութիւնների մէջ, ի
չարկէ, կային պակասութիւններ, որոնց մաս-
սին իսկոյն կը խօսեմ:

Խաղացին հետևեալ պիէսաները. «Փառք
Ասսուծու, սեղանը պատրաստ է», «Մի թա-
թէյ», «Փակված դրան մօտ» և «Նոր բնա-
կարան»: Բայի սորանից անտրականերից մի-
նում պ. Մամեան կարդաց Գամառ-Քաթի-
պայի բանաստեղծութիւններից մի քանիսը: Ա-
ւելորդ չեմ համարում յիշել որ ուսանող պ-
Փու ունեանո ածեզ ախանօի փրա և ուղեկիցն

վողը պիտի մէջ եղած երգերին; Առաջին
պիհան թէ բովանդակութեան, թէ ժարգ-
մանութեան և թէ խաղի կողմից ամենասնա-
ջողն էր ամբողջ ներկայացումից: Պ. Տէր-Պետ-
րոսեան ձշմարիստ տաղանդ ունի, նրա խաղը
ազատ է, համարձակ է և բնական: Օրիորդ
Վ. Պաշայեան, որի շնորհայի խաղը յայտնի է
արդէն մեր հասարակութեանը, այն երեկոյ
մանաւանդ առաջին և երկրորդ պիհաներու մ-
կարծես յոգնած էր երեսում, դանդաղ էր խո-
ղում, լաւ արամադրված չէր երեսում: Օրիորդ
Ս. Քօմինեանց իր գէմքով, շարժվածքներով,

կազմուածքով, խաղով կատարելապէս յարմար վում է սուբբէտի դերերին, նա կարծես այդ դերերի համար ստեղծված է, բայց խոր հուրդ ենք աալիս նրան աշխատել աւելի լաւ և պարզ արտասանել բառերը. նա չափից դուրս

արագ է խօսում և նրա ձայնը կարծես բօշ

զարկված լինի, հնչեւնսերը պարզ չեն դուրս
գալիս: Պ. Մամեան որպէս յեւն-պրեմիեր ունի
բնմական ընդունակութիւն, մանաւանդ առաջ
տիկ համարձակ է, —այդ գրա մեծ արժանաւ
որութիւնն է, բայց պէտք է աշխատել աւ
ելի բնական, աւելի համեստ կերպով խաղալ,
չը պէտք է այդքան կոտրատվել: Պ. Տէր-
Դաւթեանց, ինչպէս միշտ, կօմիկական գերե-
րուժ աննման է. նրա ամեն մի խօսքը, ամեն
մի շարուածքը ծիծաղեցնում է հասարակու-
թեանը: Պարոնը երբէք չը պէտք է դուրս
գայ, մեր կարծիքով, պարզ կօմիկական գերերի
շրջանից:

Վերջապէս օր. Մ. Վարդանեան, չը նայեալով որ առաջին անգամ դուրս է զալիս բեմ, ցոյց տուեց որ ունի բեմական բնածին ընտանակութիւն։ Նրա գեղեցիկ արտասանութիւնը, զօրեղ և դուրեկան ձայնը, ապատիսակը, վայելուչ և բնական շարժմունքները և քայլուածքը, — այդ բոլորը զրաւում էր հանդիսականներին։ Կարծես նա վաղուց է որ վարժ է բեմին։ Նա կարող է խիստ ողբերգական գերեզում խաղալ։

Նիշը Յ. Տէր-Գրիգորեանն էր, որ և ինքն խաղամմամբ էր «Մի թաս թէյ» պիեսայի մէջ: Որքան Տէր-Պետրոսեան բարեխզնաբար կատարեցի բարձր շրջանի մարդու, բարօնի դերը, այնքան Տէր-Գրիգորեան բարեխզնաբար կատարեց փոքրիկ չնոօպնիկի, Ստուկոլիկինի դերը: Տէր-Գրիգորեան իր դերը հասկացող, բարեխիղճ, խելացի, իր դերը լաւ ստվորող դերասանն է: Եւ այս պիեսայում դժբաղդասիկս օր Պաշայեան կարծես ակամայ էր խաղամմ: Խաղադրած էր երեսում և իր դերը լաւ չը գետէր: Մենք կարող ենք աւելի խատ վերա-

բերվել դէպի օր. Պաշայեան քան թէ դէպի
ուրիշները, որովհետեւ նա արդէն շատ անգամ
խաղաց և զրաւեց արդէն հասարակութեան
համակրութիւնը:

8. Տէր-Գրիգորեանի թարգմանութիւննեոս

շատ և շատ աջող են:

«Փակիված զրան մօտ» պիեսայում օր. Պաւաշյեան անհամեմատ աւելի լաւ խաղաց, քան թէ առաջին պիեսաներում: Նա բնական էր, ունէր մի քանի ճշմարիտ սրտաշարժ րօպէներ: Բայց օրիորդը ունի մի պակասութիւն. նա բեմի վրա շատ մեծ քայլերով է մանգաւիս, իսկ բեմի վրա պէտք է միշտ աշխատել փոքր քայլերով մանգավ: Այդ պատճառով նրա քայլուածքը չափից դուրս արագ է երևում:

Ամբողջ ժամանակ հասարակութիւնը ան-
գաղելի կերպով ծիծաղում էր; Պիտսայի ըն-
semble անյանդիմանելի կերպով անցաւ; Պ. Տէր-
-Գաւթեան աննման էր:

Յուլիսի 23-ի ներկայացման մէջ երևացին
երկու նոր երիտասարդներ՝ Ս. Տէր-Գրիգորեան
և Լ. Մէլիք-Ադամեանց:

Անտրականերից մինում պ. Մամետն կար-
դուց Ա. Պատկանեանի (Պատմութակայի)
երկու բանաստեղծութիւնները: Ըսթերցումն
կատարեալ էիր, բայց առեւի ընական և Հա-

Վերջացնելով մեր խօսքը շնորհակալութիւն
նք յայտնում իշխան Ս. Բէհբութեանին, որ
խառալարում էր այդ ներկայացումն, ուրիշն
Ած և ծանր աշխատանք էր յանձն առել և
որ յանձն առած աշխատանքը բարեկաղձաբար
էր կատարել:

ՆԱՄԱԿ ՈՒՐԱԼԻՑ

Եկաթերինբուրգ, 14 յունիսի

Կաթօվիկը և հայ բողոքականը անցեալ չունեն, ա-
սում են ումանք, —լուսաւորչական հայերն միայն
անցեալ ունեն, որովհետև պատմութիւնը նրանց է
պատկանում: Դրանից ստոր երեխայական մտա-
ծութիւններ լինել չեն կարող: Եթէ մեր անցեալը
բովանդակում է միայն մեր եկեղեցու մէջ, ուրեմն
էլ Բնչու ենք պարծենում Տրդատից և Լուսաւոր-
չական եկեղեցին համսկեցաւ. և նրանից առաջ
եղող մեր նախնիքներին հայ չը համարենք, որովհետեւ կուսապաշտներ էին և այդ եկեղեցուն չէին
պատկանում: Բայց մենք մի այսպիսի խարութիւն
չենք զնում պատմութեան մէջ: Այլ ևս Բնչ իրա-
ւոնքով կարող ենք ասել կաթօվիկ և բողոքական
հային, թէ զուք անցեալ չունէք, երբ նրանք էլ
մի և նոյն ցեղի շարունակութիւնն են, —երբ. Հայ-
կը, Արամը, Տիգրանը, Տրդատը, Լուսաւորիչը,
Վարդաննը, Ներսէս մնձը և այն, որքան լուսաւոր-
չականին են պատկանում, այնքան էլ պատկանում
են հայ բողոքականին և հայ կաթօվիկին: Ազգային
պատմութիւնը, ազգային անցեալը ստեղող ազգի
սեփականութիւնն է, ինչ կրօնի և լիչ աղանդի
պատկանելու լինէին նրա կազմող մասները:

Եթէ այսօր հայ բողոքականը և հայ կաթօվիկը
իրանց հայ չեն համարում, այդ անկրթութեան հե-
տեւանք է: Միթէ անկիրթ հայ լուսաւորչականը մի
և նոյն աչքով չէ նայում նրանց վրա. միթէ նա
բողոքականին և կաթօվիկին հայ է համարում: Որ-
պէս հայ կաթօվիկը իրան ֆրան գ է կոչում, այն-
պէս էլ հայ լուսաւորչականը նրան ֆրան գ է կո-
չում: —Այդ բոլորը առաջ է գալիս այն համոզ-
մունքից, թէ ազգայնութիւնը պէտք է որոնել ե-
կեղեցու մէջ: Եւ այդ բոլորը կանհետանան այն
ժամանակ, երբ ադգայն ու թե եան գաղափ ա-
ռ լ կրթութեամ միջոցով կընդհանրանայ ամեն մի
անջատված մասների մէջ:

